

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԷՋ ՄԸ

(Շարուն. տիս Էջ 13)

Մենք զմեզ ուրիշներէն աւելի բաղդաւոր կը համարինք որ բաց ի Յայտարարութենէն, նոյն իսկ Հայելիին գոնէ երկու (3 եւ 4) թիւերը աչքի առաջ ունինք որով և ստոյգ ու ամփոփ ծանօթութիւն մը տալու հաճոյքն պիտի ունենանք այս աշնչափ փնտռուած և չգտնուած թերթին նկատմամբ¹ :

Թերթին խորագրին է՝ « ՀԱՅԵԼԻ ԿԱԿԱՐԹԵԱՆ. որ է վէպը քաղաքակրթութեան, գրականութեան եւ այլոց, (շարաթաթիւրթ). Յիսուստիսիսիսիս Միսթրոսիսիսիս. Խմբագիր՝ Յովնոսիսիս Տէր Յակոբիսիս. 1820 կալիսիս տպարան Յարպանոսիսիս Պարոն Պոլոսիս » :

Աւարտին թիւը լոյս տեսած է 1820 տարւոյ օգոստոսի 12ին՝ ինչպէս հրատարակիչը, ինքնին կը գանգատին, բաւական դժուարութեանց կը հանդիպին ի սկզբան՝ օրինաւոր գրաշար չունենալուն համար. վասն զի նոյն 1820 թուականի օգոստոս 26ին թիւ 3-րդին մէջ այսպէս կը կարգանք. « յանցեալում շարաթու ի 29 երրորդին (տպագրական վրիպակ և պէտք է ընթեռնուլ 19 երրորդի) օգոստոսի ամսոյս ծանուցումն մի եղև ի մէջ հասարակութեան արգոյ մերազնէից, վասն գտանելոյ զօրինաւոր գրաշարս ի սպաւհարկութիւն գործառնութեան մերում. սակայն տխուր հմք զի մինչև ցայսօր ոչ եղև մեզ հնար

յաջողիլ յակընկալութեան մերում. յայն սակս և վերստին խնդրեմք յազնուամիտ մերազնէից, զի եթէ զիտակ լինիցին զուսմեքէ կատարեալ ի գրաշարութեան, շնորհ արարեալ ստացիցեն զնա առ մեզ ի տպարան զի կարասցուք թարց այսքան նեղութեանց հասանել ի զագաթ բաղձնաց մերոց² » :

Հայելիին մեծութիւնն է 32 × 22 հրդ. մետր, միածալ, երկսին չորս էջերէ բաղկացած. կը հրատարակուէր ամէն շաբաթ օրերը. բովանդակութիւնը՝ ինչպէս վերը ըսինք, քաղաքական, վաճառականական առեւտրական, գրական և այլն լուրեր էին. փաղաքական բաժինը առ հասարակ տեղական թերթերէ քաղուածոյց էին. ինչպէս 1820 սեպտեմբեր 2, թիւ 4ին մէջ կը կարդանք. « Յայսմ շարաթու լրաթղթի մերում ընթերցասէրք մեր տեսանելոց են զայնպիսի քաղաքական լուրս, զոր հնար եղև մեզ ի մեր բարբառ վերածել յանգդիական լրաթղթոց, ի մէջ այսր շարաթու. և զայնպիսի մարդաշահ և զուսմեացուցիչ բանս, զորս ուսումնասէր մերազնիցք հաճեցան ի ձեռն համապատասխանատուութեանց ընդ միմեանս տալ քմաց ընթերցողաց մերոց ճաշակել » : — Նոյնպէս նաեւ զրական բաժնին մէջ, ի միջի այլոց՝ անգղիերէնէ թարգմանուած ռուս. նաւոր և արձակ գրութիւններ կային : Նուապեաներու և Գնացիք » նաւերու և նաւապետներու անունները կը նշանակուէին միշտ, ինչպէս ամսոյն օրերն ու մեկնած և հասնելիք քաղաքներուն անունները :

Հայելիի լեզուն միշտ գրաբար էր, սակայն չէին պակսեր երբեմն նաեւ աշխարհաբար թղթակցութիւններ. իրեւ ճաշակ

1. Արժ. Տէր Յովն. Աւաշ քահանայ Մկրտան, որ շատ խնամքով հաւաքած ունի Հնդկաստոյց մատենադրական հին ու նոր նշխարները, Թէ անձամբ և Թէ նամակադրութեամբ մինչև վերջերս փնտռած է ի միջի այլոց այն թերթն եւս, և միշտ յուսախար եղած :

2. Նոյն գանգատը կ'ընէ նաեւ 56 տարի վերջը՝ Տէր Յովն. Խաչեկան իւր Գաւազանգիր Նոր Զուգայ ե.

պիսկոպոսաց զրոյց վերջաբանին մէջ, որ կրկնապատիկ աշխատութիւն յառն առնուլ ստիպուած էր՝ « այն է փոխումն շողագրոյ (շեղագիր) ի սպագիր, վասն վերծառնելոյ հնդիկ գրաշարին, ըստ որում հայ գրաշար չից աստ ի մեզ, Թող և գանգափութիւն վրիպակաց ասու ջեայն այնու » :

մը տեղւոյն նոյն ժամանակի ժողովրդական լեզուին, որ միանգամայն զաղուծին նախկին բնավայրն կը մատնանշէ՝, աւելորդ չեմ համարիր մեր ընթերցողաց ներկայացնել հետեւեալ նամակը:

« Յարգելի վերատեսույր. — Ձեր անցեալ շարաթէն լրաթղթում տեսի մին եւրիտասարդուհի՝ մին հինաուրցի գրված կին ծաղր էր արարել, իրաւի ես չեմ կարող ձեզ գրով յայտնել որքանամ սքանչացել էաւոր գրած պատասխանի վերայ և մինչև ցայժմ էսպէս գեղեցիկ հպակական ոճ չի կարգացել. արեւմանայ ինչ կ'ասի մին խօշտարչի պարոն, էտ բաւերն վիշկլան պատմագրութիւն գործածաց. այսինքն արժմայ, չէ՛ն, չի, և այլն. էտպէս բառերն պիտի նոր բառարան որ տպւում լինէ՛ք նորմէ քն բառարանում լիովին բացայայտութիւն տէ՛ք և մեկնութիւն գրէ՛ք որ հասկացվի ինչ կնշանակեն և ինչ տեղ ինչ բանում գործ կածվեն: Յուսամ այս գրութիւնն ձեր հրամանաց արժանաւոր գա-

զէթում տեսնելոց եմ. և շնորհակալ կլինիմ յոյժ յոյժ. Մնամ Ձեզ մտերիմ ըոյր Հեղինէ Աւերիլոս, աւգոստոս 20, 1820 »:

Հայկիի մասին սոյն տողերս վերջանելէ առաջ հարկ եր համարիմ իմաստախնդրեան Միաբանութեան հրատարակած պաշտօնական Յայտարարութեան մէջէն, տպարանին կամ հրատարակելիք գրութեանն երևուն նկատմամբ հաստատուած կանոնները եւս մեր հետաքրքիր ընթերցողաց ներկայացնել քաղուածօրէն.

Ա. — Եթէ որ յուսումնասիրաց կամիցի զազգօգուտ մատեան ինչ կամ գիր և կամ զտետրակ ի տիպ արձանացուցանել ի տրպարանի աստ, պարտի հասուցանել զծախս նորին որպէս վերատեսուչք տպարանին ունին պահանջել ի նմանէ ըստ օրինաց տպագրութեան:

Բ. — Եթէ որ. . . յայլ և այլ տարակաց տեղիս բնակելոց կամիցի. . . մատեան ինչ և կամ զգիր ի լոյս բնծայել ի տպարանի աստ, և չունիցի զոր գործակատար

1. Հնդկաբակ ազգայինք առնասարակ ի Նոր-Ջուլայէ զաղթած են, և ինչպէս կը տեսնենք՝ իրենց լեզուի բնադրովը անաղարտ պահած են երկու ժամանակ. իրեւն ապացոյց՝ և հետաքրքրական էլ մի ու միանգամայն իր եր համեմատութեան մի և նոյն զաւանթարբարի, մէջ կը բերենք նախաբար յեղատուութեան ԳԱԻԱՋԱՆԱՔԻՐԻ Ամենափրկեան վանաց՝ ամբաստանեալ և շնորհազօրեկ եղած Ատենադարին՝ Տէր Եղիշէ Յ. Միլլուտմեանի մասին Ջուլայի հասարակութեան կողմանէ առեպիսկոպոսն գրուած ինդրագիրն՝ կամ ինչպէս իրենք կ'անուանեն մանգարմ. ՝ Վեր Առաջնորդ յախիրն խեղճ տէր Եղիշին ասորէջ Բարսայ վիճակին քաշանայ, տեղի յօղէ վաս է զուգէ մեռանի յետ չօյս — երկու վարչապետաց շուշին քաղէջ, Ա. Վարդապետն զնաց իմամ ջօմի մօտ գանգատ, առաջնորդն շնորհով յետ բերէջ, քանի օր իրօղին բանտարկէջ. և յետոյ քանալորէջ. նա զնաց Փառու Աւանք Կաթօլիցաւ, լսեմք երեկի որ էր ամոյս 4, պատարալ է մատուցել ջրախառն — խաչատուր վարդապետն եւ շատ նեղած է, սա շատ կողմնական ունի, ինձ երեւումէ մին մեծ դուլաբարէկ կպատահի այս միջոցում, հասարակութիւնն Չ են բաժանված, մին միւսին ներհակ, և հասարակապէս յուսաւատ ված են մօտ իրուս ինչկիդ քաշանայի աչքն լուս. գեղարէնքի հայերից շատեց քաշէ իւր հաւատան Ջուլուսն և շատ ծածուկ մեր ազգիցն որսացած ունի, ու մեր առաջնորդն իմանալով յաւելի տեղիք է տու՛ման որ

գիմումն վատու և մօտ Բ. քաշանային — էտից վատ ժամանակի հանդիպած էնք. և ինձ որպէս երեւումէ՝ սա վերջ կտայ Ջուլայ անէջքով և նգովքով — ասումայ ով Ջուլուց լուր գրի հնդուտն, կտամ քաղաքապետին պատիւ ... Աստուած ինքն կատարէ Սաւան տեղից գրեցին տէր Եղիշին վանքիցն դուս գմի, Ջուլաբարաւ, հասարակութիւնն մանգար շնէջ որ տանի տայ առաջնորդին տէր Եղիշին վարդապետ շինի. երկու հարկերից յաւել ստորագրութիւնն եղած էր, տէր Մինա Բարսեկի որ վանքումն առաջնորդի բաւէ բաւէ ասողաց մինն է, իւր աներձակ Աբրահամ Գ. Տէր Խաչատուրին որ Երեւանն եկեղեցոյ մութավալին լինի սովորացնումայ, յի՛ գո մօտ բերեն ձեռնադրելոյ՝ ճպտարի, մի վախեալ սրբազանն ցեզ կպաշտպանի, սա է ճպտառումայ, հասարակութիւնն զնաց առաջնորդի մօտ գանգատ. զնացէ՛ք զնացէ՛ք՝ ասաց ես գեւտեմ, առանց իմ գիտութեան բան չի լինել, լաւ է արել որ ճպտեմէլայ, զուց պիտի առաջ ինձանէ իորհուրդ հարցանիք, ապա թէ մանգար շինիք: — Առաջնորդ վախեցաւ, որ ի՞նչ Եղիշէ վարդապետ լինի՝ գիտուն իմաստուն անձն է, հասարակութիւն յետոյ կարելի է ուղարկի իշմիւսնի եպիսկոպոսն մեռնադրել տայ և յետ բերի վանքումն պահի. և իրան դուստանն, քաշանայքն եւս նորա գիտութեան վերայ նախանձնելով ջանալան Ջուլուց դուս գմեցին. էս էլ մեր վկան առաջնորդի հաւ ու հաթիւն, գիտակ լեր, Ջուլայ թիւն 1874, ջուլայի 6 »:

յայսմ տեղով կարէ առաքել զայն հան-
դերձ տպագրութեան ծախուքն ի ձեռս վե-
րատեսչաց տպարանին. որք ըստ հաճոյից
նորա յօժարակամ փոյթ տարցին գործա-
կատար լինել նմա:

Գ. — Մի՛ երբէք տպագրեսցին ի տպա-
րանի աստ գիր ինչ և տեսրակ, որ ընդ-
դէմ իցեն հայ. Ս. եկեղեցւոյ ... Իսկ եթէ
ոք ի հակառակ իրաց ժպրէիցի յայլում
տպարանի զամենայն զվերոյ գրելոց ընդ-
դէմ բանն տպագրեալ հրատարակել, յայն-
ժամ ի տպարանէ աստի այնպիսւոյ բա-
նիցն արժանաւայելի պատասխանիք տպեալ
հոչակեացին, ի պահպանութիւն ողջախոհ
վարդապետութեան հայ. Ս. եկեղեցւոյ և ի
պաշտպանութիւն պարզամտաց ի խզաթիւր
հանապարհ մոլորութեան յանկանելոյ:

Դ. — Յիւրաքանչիւր շարթթու միան-
գամ հրատարակեսցի լրաթուղթ մի Հոյկի
կալիսրեան անուն, յովթ էջս բովանդա-
կեալ եւեթ:

Ե. — Իւրաքանչիւր ոք կարէ արձակո-
ւոյն նպատամատոյց լինել ծախուց տպա-
գրութեան լրաթղթոյն, շնորհելով վասն
իւրաքանչիւր ամսոյ չորս Ռուբլի միայն
առ միոյ օրինակի նորին:

Զ. — Ամենայն ոք կարէ արձակապէս
առանց յիշատակելոյ զանուն իւր առաքել
առ վերատեսուչս տպարանին զբարոյա-
կան և զբանաստեղծական գրուած ինչ առ
ի հրատարակել ի լրաթղթի անդ. թէ՛ գրա-
բառ իցէ և թէ՛ աշխարհաբառ, պարզ և
յստակ գրեալ, կնքեալ, և վերտառեալ
զայն այսպէս. « Առ վերատեսուչս Կալ-
կաթեան Հայեւոյ տպարանին », որ ըստ
ընտրողականութեան իւրեանց յամենայնի
ինձմ տարցին առ ի անհառապէս ի լոյս
ընծայել:

Է. — Մի՛ երբէք տպագրեսցին ի տպա-
րանի աստ թէ՛ ի լրաթղթի և թէ՛ առան-
ձնակի, որ ինչ ընդդէմ համբաւոյ ուրուք
իցեն պարսաւական բանք, բայց ի քաջա-
վար հեգնական բանից ըստ արտօնութեան
օրինացն մեծին Յրիտանիոյ. զի մի՛ դառն
որոմն հակառակութեան սերմանեսցի ի
մերազնէից միջի ...

Ժ. — Եթէ ոք կամեսցի տպեցուցանել ի
լրաթղթի զառեւտրութեան և զյայտարա-
րական բան ինչ, որ հայիցի յօգուտ իւր
միայն, պարտի հատուցանել զմի անայ առ
տպողութիւն իւրաքանչիւր տողի, և վասն
իւրաքանչիւր հրատարակութեան լրաթղ-
թոյ:

Ուս. — Ամենայն ի լրաթղթի տպագրե-
լի բանք պարտին առաքել առ վերատե-
սուչսն մինչեւ յառաւօտեան տասն ժամն
ուրբաթու. զի հնար իցէ այնց հոչակել ի
պայմանադրեալ աւուր հրատարակութեան
լրաթղթոյ:

ԺԲ. — Եթէ ոք յուսումնասիրաց փա-
փաքիցի տպեցուցանել զգիր կամ զտե-
տրակ ինչ, պարտի յառաջագոյն հատու-
ցանել զկէնչ, պայմանադրեալ ծախուց տը-
պագրութեան, և զմնացեալ կէսն մուրհա-
կաւ խոստանալ առ ի հատուցանել զկնի
աւարտման տպագրութեան, և ապա ընդ-
ունիլ զտպագրեալսն:

Ի վերջոյ կը յաւելու թէ՛

« Բանցելում ուրբաթու ի 21 Յուլիսի
ամսոյս յերեկոյեան եօթն ժամուն Մե-
ծապատիւ Իմաստալիւնդրեան Միաբանու-
թիւնն համախմբեցան միաժողով ի միա-
բանարանի ըստ հինգերորդի ընդհանրա-
կան կանոնի նոցա. և միաձայն ընտրո-
ղականութեամբ վերոյին Յայտարարու-
թիւնն և կարգ և կանոնք տպարանին, զրե-
ցան եղան, կարգեցան և հաստատեցան .
որք և, հրաման ել ի նոցանէ զի տպագրեալ
հրատարակեսցին ի ծանօթութիւն ընդհա-
նուր բարեմիտ մերազնէից : — Հրատա-
րակեալ Հրամանաւ Մեծապատիւ Իմաս-
տախնդրեան Միաբանութեան, Սարգիս
Յովհաննիսեան Սարգսեան Միաբան և Ա-
տենապալիկ ի Կալկաթա ի 29 Յուլիսի
1820, տպագրեալ յընծայեալ տպարանի
Յօդանանեան Պարոն Պօղոսի »:

Սոյն տետրն որ Ա-Է էջերէ կը բաղ-
կանայ՝ հետեւեալ խորագիրն կը կրէ. « Յայ-
տարարութիւն յիմաստախնդրեան Միաբա-
նութեան որ ի Կալկաթա »:

Յաւալի է ըսել որ ինչպէս հրատարակ-
չական գործը, այսպէս նաեւ Միաբանու-

թեան նախախայրիք յիշեալ շարաթաթեր-
թը չէ ունեցած յիշատակութեան արժանի
ռեզնաւոր կեանք մը, գուցէ ակընկալած
նպատակը և աջակցութիւնը զլացուած ըլ-
լալուն համար, ինչ որ արդէն դժբաղդա-
բար մեր շատ մը թերթերուն ճակատա-
գիրն եղած է:

Հ. Ե. ՏԱՅԵԾԻ

ՍԱՆԴՈՒԽՏԻ

Վ.ԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Անցեալ տարի «Բազմավէպ»-ի էջերուն
մէջ Սանդուխտի վիպադրանքի մը վրայ տե-
ղեկութիւններ¹ տալ ուզելով, յօդուածիս ի
գլուխ դրած էի նոյն գրուածքին յիշա-
տակարանը, որ այսպէս կը հնչէ. «Ես
Սամուէլ կախկոպոս՝ անարժան ծառայ
Քիրտասին, թարգմանեցի զվկայարանու-
թիւն տուրբ առաքելոյն թագէտի, և զւրը-
բոյ կուսին Սանդուխտ, և ետու ամենայն
Հայաստան աշխարհի» և յօդուածիս ըն-
թացքին մէջ կը գրէի «տեղեկութիւն չու-
նինք... թարգմանչին վրայ, Սամուէլ ե-
պիսկոպոսին: Սոփերքի հրատարակիչը կը
տարակուսի թէ մի՞ գուցէ ասորի Շմուէլ
կաթողիկոսն ըլլայ» ինչ որ առանց փաս-
տի ալ կրնայ ապացուցուիլ թէ՛ չէ՛ Շա-
մուէլ ասորին, զոր Վռամ կերպով մը հա-
կաթու կը զնէ Ս. Սահակին, հետու աշ-
խատելէ հայերէնի զարգացման, զոր թե-
րեւս չէր գիտեր ալ, հակառակը պիտի

ընէր մանաւանդ, Զնչիւու զարգացում մը,
զոր Ս. Սահակ ու Ս. Մեսրոբ կը ծագ-
կեցնէին, որ կը կտորէր ասորերէն լեզուի
ու նուիրապետութեան ազդեցութիւնը, զոր
զօրացնել ոչ միայն իր ազգային զգացու-
մը կը հարկադրէր, այլ և պարսիկ իշխա-
նութեան հրամանը: Ասկէ զատ «և սա-
կաւ ինչ կացեալ ժամանակս՝ վախճա-
նէր»² և այս քիչ ժամանակը բաւական
եղած պիտի չըլլայ իրեն, թէ գրականու-
թեան զբաղելու և թէ «ըստ կրօնիցն
Ռեքիշոյի» ապրելու:

Ինչ որ այս բանն կարծել տուած է
հրատարակողին այն տիրական շեշտն է
որ կայ այս յիշատակարանին մէջ «և
ետու ամենայն Հայաստան աշխարհի»:
Այս լեզուն խօսողը հեղինակաւոր անձ մը
պէտք է ըլլայ, անտարակոյս: Եւ իրաւցնէ
այսպիսի մէկը կ'ապրի Ս. Սահակի և Ս.
Մեսրոբի դարուն և իրենց աշակերտ՝ րու-
լորովին անձանօթ մնացած, մինչ միւսնե-
րը՝ որոնցմէ՛ ոմանց վրայ հարեւանցի ալ-
նարկ մը հազիւ եղած է, սոսկ այն յիշատա-
կուած են նորագոյն գրքերու մէջ:

Արդ Սանդուխտի վկայարանութեան
թարգմանիչը, Սամուէլ եպիսկոպոսը, Ս.
Մեսրոբի աշակերտն է, Վրահայ, կորիւնի
դասընկեր, և իր դասին մէջ առաջինը³:
Իր զանազան բարեմասնութեանց համար,
Վրաց Արժիւղ թագաւորին օրով, արքու-
նական տան եպիսկոպոս էր կարգուի, յե-
տոյ իր իրաւասութեան տակ կը մտնէ նաեւ
Տաշրաց գաւառը, հանդերձ իր իշխանովը,
հռչակաւորն Աշուշայով, որ վերջէն Վրաց
բոհաշխ կ'ըլլայ⁴:

1. Տես «Բազմավէպ». 1905 թիւ 12:

2. Փարպեցի էջ 74 ապ. Վենետիկ 1873:

3. Ս. Մեսրոբ երբ Վրաց թագաւորին ներկայանա-
լով իր բրած նոր զեւոր և անոր օգուտները կը բացա-
տէր «հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կող-
մանց կողմանց, և ի խառնազանջ զաւատաց իշխանու-
թեան իւրոյ՝ ժողովել մանկունս՝ առլ ի ձեռն վարդա-
պետին. զոր անեալ արկանէր ի բովս վարդապետու-
թեանն... Եւ արդ զնառ, որ յայնչաք ի մասնաւոր և
ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով առտուածս
բարբառ պատգամօցն մի ազգ կապեալ՝ փառքաբունից

միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ անարժանիս՝ ե-
ղեալ ի կարգ եպիսկոպոսութեան միճակ. որոց առա-
ջինն Սամուէլ ամուծ, այլևս որք և քարկաշտով՝
եպիսկոպոս կացեալ տամբ արքումակամի», Կո-
րին էջ 26 ապ. Վենետիկ, 1894:

4. «Իսկ նորա (Մեսրոբայ) անցեալ զիմայ ի կող-
մանս, առ սրով ժամանակաւ Արժիւղ անուն թագաւո-
րեալ Վրաց, որոյ առանձնազն պաշտառացուցեալ ծագ-
կեցույսանէր զվարդապետութիւնս. և նորա ջրէալ զա-
մենայն աշակերտօք, պատուիրեալ կալ ի ճշմարտու-
թեանն, Տաշրամ իշխանին Տաշրացոց ան պատուա-